ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 109-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26.12.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 634-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը և քաղաքացու դիմումը, որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 634-Ա որոշումը:
2. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի 22-րդ թիվ 7 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-025-0002-0007, հողամասի չափը՝ 0.1356 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Զենֆիրա Գուրգենի Սիմոնյանին, Արուսյակ Խաչիկի Առաքելյանին, Լուսինե Խաչիկի Առաքելյանին, Սաթենիկ Գագիկի Առաքելյանին, Աստղիկ Հենրիկի Խաչատրյանին և Խաչիկ Գագիկի Առաքելյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 174,5 քմ. և օժանդակ կառույց ավտոտնակը՝ 20,4քմ.՝ ճանաչել օրինական:
3. Ինքնակամ կառույցները օրենքով սահմանված կարգով հաշվառված են ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 20246WUXN4:
4. Առաջարկել կառույցն իրականացրած Խաչիկ Առաքելյանին և մյուսներին վճարելու 1 քմ.՝ 456 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան համար՝ ընդամենը 79 572 ՀՀ դրամ և վճարելու 1 քմ. 273,6 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված օժանդակ շինության՝ ավտոտնակի համար 5582 ՀՀ դրամ, ընդամենը՝ 85 154 (ութսունհինգ հազար մեկ հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը

սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355003451:
6. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**